



Հավելված

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 105-Ա որոշման

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և առկա խնդիրները

Ներկայումս Ստեփանավան համայնքում գործում է համայնքային ենթակայության Սոս Սարգսյանի անվան գրադարան ՀՈԱԿ: Վերոնշյալ գրադարանը, գրադարանում գործող խմբակները, իրականացող միջոցառումները և գիտաժողովները երկրաշարժից ի վեր անց են կացվում գրադարանի համար հարմարեցված մոդուլային ժամանակավոր մասնաշենքում, որը չունի ժամանակակից բավարար պայմաններ: Գրադարանը ունի մոտ 95591 կտոր գրականություն, որի պահպանման համար բավարար պայմաններ նույնպես չկան: Համայնքի խոշորացումից հետո գնալով մեծանում է գրադարանի շահառուների թիվը, սակայն առկա մասնաշենքի շենքային պայմանները չեն բավարարում արդի պայմաններին և պահանջներին:

Խիստ անհրաժեշտություն է ունենալ մասնագիտացված գրադարանի շենք, որտեղ կտեղակայվեն նաև երիտասարդական կենտրոնի, ՀԿ-ների և վերը նշված միջոցառումների պահանջներին համապատասխանող տարածքներ: Համայնքում անց է կացվել հանրային լուծում երիտասարդների շրջանակում, որում մասնակիցները կարևորել են համայնքում ունենալ արդի պահանջներին համապատասխանող նոր գրադարանի մասնաշենքի առկայությունը:

Որպես մասնաշենք ընտրված է Սուրբ Նշան փողոցի թիվ 17 հասցեում գտնվող նախկին գանձապետարանի շենքը, որի 2րդ հարկի մի մասը անհատույց շահագործման իրավունքով հանձնված է եղել ՀՀ գլխավոր դատախազությանը: Համայնքապետարան-դատախազություն երկկողմ համաձայնությամբ հիմննորոգվել և անհատույց օգտագործման իրավունքով դատախազությանն է տրամադրվել համարժեք համայնքային սեփականություն հանդիսացող տարածք Հ. Մեղապարտի փողոց թիվ 8 հասցեում, որն արդեն շահագործվում է դատախազության կողմից: Ներկայումս Սուրբ Նշան փողոցի թիվ 17 հասցեում գտնվող շենքը ազատ է, որևէ նպատակով չի օգտագործվում, գտնվում է վթարային վիճակում: Այն գտնվում է ՀՀ Գույքի Կառավարման կոմիտեի հաշվեկշռում:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով Ստեփանավանի համայնքապետարանի կողմից սուբվենցիոն ծրագրի հայտ է ներկայացվել ՀՀ Կառավարություն, որն հաստատվել է: Ներկա պահին ընթանում են սուբվենցիոն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2023թ. ի 1-ին եռամսյակում: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 99.277.765 ՀՀ դրամ, որի 26.273.136 ՀՀ դրամը (26.47%) կազմում է համայնքի ներդրումը, 19.855.553 ՀՀ դրամը (20%) Իզմիրյան Բ/Հ ի ներդրումը և 3.510.193 ՀՀ դրամը (3.53%) ՄԱԶԾ ի ներդրումը:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները

Գրադարանի և երիտասարդական կենտրոնի մասնաշենքի շահագործումը և պահպանումը համարվում է համայնքապետարանի ռազմավարական զարգացման հիմնական խնդիրներից մեկը: Գրադարանի և երիտասարդական կենտրոնի մասնաշենքի շահագործումը կնպաստի

համայնքի բնակչության կրթական մակարդակի դրական փոփոխությանը և երիտասարդաների ժամանցի կազմակերպմանը:

Մասնաշենքը հիմնանորոգումից հետո կունենա բոլոր անհրաժեշտ պայմանները, կծառայի համայնքին որպես գրադարանի և երիտասարդական կենտրոնի մասնաշենք, հնարավորություն կստեղծվի շահառուների թվի կտրուկ ավելացմանը: Շահառուները կլինեն գրեթե ամբողջ համայնքի բնակչությունը՝ մոտ 18.000 մարդ, ինչպես նաև Ստեփանավան եկած զբոսաշրջիկները:

Ներկայումս գործող գրադարանի պահպանման, աշխատակիցների աշխատավարձերի և այլ ծախսերը ֆինանսավորվում են Ստեփանավանի համայնքապետարանի կողմից, որոնք 2022թ.-ի համար կազմում են մոտ 14.000.000 ՀՀ դրամ: Նոր մասնաշենքի հիմնանորոգումից հետո վերը նշված ֆինանսավորումը նույնպես կավելանա: